Հյուսիսային կողմի տաճարում

Վեց հարյուր վաթսունվեց (1217) թվին Աստծու շնորհների սկզբից, երբ Արարատյան գավառի եկեղեցիները հիմնադրվեցին ու լուսավորվեցին երկու հարազատ եղբայրներ Զաքարիայի և Իվանեի և նրանց արդարածնունդ զավակների՝ Շահնշահի և Ավագի ձեռքով, ես իշխանաց իշխան Վաչես՝ Վաչուտանց Սարգսի որդիս, մեծ պատվով սիրված սրանց կողմից, իմ հավատարիմ ծառայության համար նշանակվեցի այս գավառի վերակացու, իմ կողակից Մամախաթունի հետ միաբանվեցի Օհանավանքի ուրբ ուխտին, բազմաթիվ տուրքերով ու ընծաներով օգնական եղանք այս մեծափառ նորակերտի շինությանը: Եվ Սուրբ ուխտի առաջնորդները որոշեցին ամեն տարի պատարագել Քրիստոսին հանուն ինձ՝ Ղազարի տոնը բոլոր եկեղեցիները՝ հին ու նոր (պատարագեն): Խաչգյուտի օրը Մամախաթունի համար պատարագեն Քրիստոսին հին և նոր եկեղեցիները անխափան՝ մինչև Աստվածորդու գալուստը: Նրանք, որ չանեն, թող դատվեն Քրիստոսի կողմից:

Տաճարից դուրս արևմտյան դռան վրա

Բարերար Աստծու շնորհներով տեր Կոստանդին Ա կաթողիկոսը 692 (1243) թվին՝ Շահնշահի՝ Զաքարիայի որդու, մեր նահանգում Վաչեի որդի Քրտի իշխանության օրոք, միաբանվեցի Օհանու այս սուրբ ուխտին և տվի Անբերդի երկիրը իբրև սեփական վիճակ Սուրբ Կարապետին՝ Ապարանից, որից Քասաղ գետը բաժանվում է մինչև Աշնակ: Եվ սրա սպասավորներ Մկրտիչ եպիսկոպոսը և եղբայրները (միաբանները) խոստացան կատարել մեր հիշատակը մեր մահից հետո երկու քառասունք ամենը ըստ կարգի: Եվ ինը խորանով Սուրբ Կաթողիկեն ամեն տարի պետք է պատարագի Քրիստոսի Տերընդառաջի տոնին: Եթե որևէ մեկը ազատներից կամ իշխաններից ձգտի այս վիճակները խլել Սուրբ Կարապետից, Աստծուց և երեք սուրբ ժողովներից, Սուրբ Լուսավորչի աջից, մեզնից անեծք առնի. ամեն:

Գավթում հյուսիսային կողմը

Վեց հարյուր իննսուն ինը (1250) թվին Մեծ Զաքարիայի որդի Շահնշահի տերության ժամանակ, ես՝ Վաչեի որդի Քուրտս,

Մարծպանի և Մաքանի դուստր իմ կին Խորիշահը, Աստծու խնամքներով հաճո եղանք այլազգի նետողների զորքին, իմ անձը նվիրեցի հայոց եկեղեցիներին: Դեպի Աստված ունեցած մեր սիրո համար կրկին հաստատեցինք մեր միաբանությունը Սուրբ Կարապետի նկատմամբ և սկիզբ դրինք մեծափառ տանը և բազում ծախսերով ի կատար հասցրինք: Այս սրբի սպասավորները նշանակեցին տարվա մեջ քսան օր ժամ: Տասը ինձ՝ Քրտիս, իսկ տասը՝ Խորիշահին. քանի կենդանի ենք՝ տասը՝ Վաչեին, իսկ տասը՝ Մամախաթունին*: Մեր մահից հետո մեզ նոր կիրակիին սկսում են և անպակաս կատարում: Ով խափանի, մեր մեղքերին պարտական է: Գրությունս կատարողները թող Աստծուց օրհնվեն. ամեն:

Գավթից դուրս դռան գլխին

Յոթ հարյուր յոթ (1258) թվին հզոր Աստծու կամքով այս իմ հրամանը և արձանագրությունը հաստատվում է Շահնշահի, մանավանդ Զաքարիայի որդի՝ Մեծ Հայքի և վրաց Ամիրսպասալար Թայխուցեսի (արձանագրությունը Մանդանադոր Թայխուցես) կողմից: Ինչպես գրեցի, իմ շինած ժամտունը, Շալվաշեն գյուղը տվի Սուրբ Կարապետին իմ ու Խոշաքի հոգու հիշատակի ու մեր որդիների արևշատության համար: Եվ կրկին հաստատեցի իմ հոր հրամանները՝ գրությունը, որ գրել են: Նաև ժամտունը, որին ես տվել էի, Որցկան գյուղը և Տաճկամարգը, ազատ էի արել սրանց ամբողջ ժառանգությունը, որ այս գավառում է և հաստատեցի, որ եթե որևէ աբեղա գրգռվի ու աղաղակ բարձրացնի, գիշերաքունի ապաստան չտան, ունեցվածքը տերունի լինի: Արդ՝ եթե թագավորներից կամ իշխաններից մեկը հանել ջանա, մեր մեղքերին պարտական լինի, ամեն:

Գավթում հարավային որմին

Յոթ հարյուր քսանութ (1279) թվին բարերար Աստծու շնորհներով Հասանի տերության ժամանակ մենք՝ Վարդան վարդապետը և Մխիթարիչ ծառաներս, Քրիստոսից շատ արդյունքներ ստեղծեցինք

*Արձանագրված է Մամքանայ, տե՛ս ռուսերեն հրատարակության 248 էջը: